40. Զաքարիա աշխ. Խաչ. (Հէք ներէն)
71. Զեմենտոս.
79. Աորներսեհ.
94. Մուշէ կամ Մուշեղ.
124. Շահէն.
149. Շաւարշ.

Թադէոսին աշակերտաց կամ որ նոյն է՝ յաջորդ եպիսկոպոսաց յայլ և այլ կողմանս յաջորդողներուն և կամ անոնցմէ ձեռնադրուողներէն գտնուած և յայտնի եղածներուն ոմանց անուանքը.

160. Զոթիկոս 'ի կողմանս Հայոց.
253. Ակակիոս 'ի Տիգրանակերտ.
254 Մեհրուժան 'ի մեծն Հայս.
285 Աթանագինէս 'ի Սեբաստիա
254. Սլաւիոս 'ի Սեբաստիա.

Թադէոսին 'ի Կեսարիա ձեռնադրած և յաջորդ թողած Առաքելական ժառանգներուն ամբողջ դասակարգութիւնը մինչև Ս. Լուսաւորիչ.

41. Թէոփիլոս Անտիոքացի աշկ. Թադ.
65. Երուանդ 'ի Նահանգէն Գամրաց.
79. Մաքսիմոս 'ի Նահ. Կեսարիոյ.
109. Մեհրեան կամ Միհրան Լողենոցի
122. Ադրիկոս՝ Սեբաստացի.
149. Սլաւիոս.
151. Սահան.
161. Ալբիանոս.
193. Մեհրուժան.
218. Պենտանոս.
227. Աղեքսանդր.
237. Արքեղայոս.
249. Պարմելիանոս կամ Փիրմելիանոս.
277. Կղեմէս.
292. Ղևոնդիոս.
302. Գրիգորիոս.(1)

(Շարունակելի)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Հանդէս օրհնութեան Արքալոյս իւղոյն Միւռոնի.

Ազգիս ընդհանուր հասարակութեանը արդէն յայտնի էր ընդ ամենայն տեղիս ժամանակ օրհնութեան սրբալոյս իւղոյն միւռոնի ամիսներով յառաջ. ուստի և սուրբ խաչէն յառաջ Տաճկաստանէն մեծ բազմութիւն ուխտաւորաց հասան 'ի սուրբ Էջմիածին.

Սոցա հետ եկաւ նաև Բերիոյ վիճակին Առաջնորդ Մկրտիչ վարդապետն Տիգրանեան պատրիարգական թղթով, յիշեալ վիճակին վրա եպիսկոպոս ձեռնադրուելու. որոյ համար Սոյ վիճակի երևելի քաղաքներէն շատ Ազգայինք մահսերական նամակներով խնդրած էին Սեհախա Կաթուղիկոսէն ոչ միայն

(1) Այս Գրիգորիոս Ս. Լուսաւորիչէն կ՚սկսին յաջորդ հայրապետները "Քահանայապետ" "Եպիսկոպոսապետ" և ընդհանրապէս "Կաթուղիկոս" տիտղոսները կրել փոխ. "Պատրիարք" տիտղոսն ալ Ներսէս մեծին օրէն կ՚աւելնայ.

արժանացնել յիշեալ վարդապետը Եպիսկոպոսական սուրբ Աստիճանին , այլև ամենեքին կ՚բաղձային և կ՚խնդրէին որ սրբոյ Էջմիածնի և ընդհանուր Հայոց Հայրապետի խնամոց ներքև գտնուին , մինչդեռ Սիսայ աթոռը առանց հաւանութեան ընդհանուր Ազգին՝ անարժան միջոցներով կ՚բռնաբարուի .

Սրբալոյս միւռոնի օրհնութեան հանդիսին երկու շաբթով յառաջ գրեթէ իբրև նախատօնակ կատարուեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը խաչվերացի կիրակի օրը հրաշափառ հանդիսիւ ՚ի մխիթարութիւն ուխտաւորաց . յորում արժանացան Առաքելական սուրբ աստիճանի եպիսկոպոսութեան Մկրտիչ վարդապետի հետ և Աթոռոյս միաբանութենէն՝ ծերունի Մկրտիչ բազմաշխատ վարդապետն Յովակիմեան , Թադէոս վարդապետն Սպահանցի և Գրիգոր վարդապետ Մուշեղեան Անդամք Սինոդի ՚ի վարձ իւրեանց սրտեռանդն և հաւատարիմ ծառայութեանց .

Սրբալոյս միւռոնի օրհնութեան օրը որ նշանակուած էր սեպտեմբերի 29 . Վարագայ սուրբ խաչի կիւրակին , նախընթաց երկու շաբաթը Տաճկաստանէն հետզհետէ լցուեցան ուխտաւորք Իզմիտու վիճակէն՝ Բարդիզակցիք , Սեօլեօզցիք , Ատապազարցիք , Զէնկիլէրցիք , Գէյվէցիք և այլն , Կարինէն , Վանէն , Եւդոկիայէն և Ղարսէն հազարաւոր անձինք ընդ որս և ընտանիք . Վանայ ուխտաւորաց հետն էր և Մկրտիչ վարդապետն Պըլմեան և Երեմիա վարդապետ քանի մի վարդապետներով և Ղարսայ առաջնորդ Գրիգորիս վարդապետ .

Ռուսաստանի ազգայիններէն կրկնապատիկ բազմութեամբ եկան Տփղիսէն , Գորիէն , Սղնախէն Նոր Նախիջևանէն , Մոզդոկէն , Ղարաբաղէն , հին Նախիջևանայ գաւառներէն հոգևորականք և աշխարհականք թող զբազմութիւն բնակչաց շրջապատ գիւղօրէից Էջմիածնի , յԵրևանայ և յԱլէքսանդրապօլու և Ախալցխայու վիճակէն . այսպիսի բազմութիւն ուխտաւորաց յօրհնութեան միւռոնի և յայլ հոգևորական հանդէսս յառաջին անգամն է որ տեսանք .

Արդէն Աթոռոյ հիւրանոցը , վարժատունը և միաբանից արևելեան կողմի սենեակները լիքն էր ուխտաւորաց բազմութեամբ . Վարագայ խաչի պահոց շաբաթը այնքան շատացաւ բազմութիւնը ևս , մինչև պարտաւորեցան կանոնաւոր զօրք բերել տալ յԵրևանայ երեք օր յառաջ քան միւռոնի հանդիսի օրը . որովհետև անհնարին էր խուռն բազմութիւնը յետ մղել երեկոյ առաւօտ եկեղեցականաց եկեղեցի գնալու .

Վեհափառ Կաթողիկոսի անուան տօնախմբութեան օրը սուրբ Գէորգայ տօնին և Պարոն Նիկոլայ փոխարքայի գլխաւոր պաշտօնատարի այցելութիւնը ՚ի սուրբ Էջմիածին՝ աւելի առիթ տուին մերձակայ՝ բնակչաց ևս օր յառաջ աշխարհաժողով բազմութեամբ լցուիլ յԷջմիածին .

Ընթացս ներքին և գրոց պարզապէս բաղ-
մութիւնք բանիւքն եւթն, պարապի շըր-
ջապատ եւ պատարուստ և Վաղարշա-
պատ գիւղը առ հասարակ լցուեալ է
բազմութիւնք և յատուկ վկաններ ըն-
թացման պարկապէն գալոյ.

Վեհափառ կաթուղիկոսի ձեռնադր-
ութիւնը փառաւոր հանդիսիւ կատա-
րուեցաւ շաբաթ օրը, յորում նախթանքի
ժամանակին ըստ սովորութեան ատենա-
ւոր ձայներ կարդացին երկու սարկաւա-
գունք ՚ի հանդիսի հոգևոր ուխտին. իսկ
կիւրակի օրը, յորում Վեհափառ Հայ-
րապետն ինքնին էր պատարագիչ. գիշե-
րային ժամերգութենէն ետքը այսպէս
սկսաւ միւռոնի օրհնութեան հանդէսը.

Սրբազնագոյն պատարագիչը զգեստա-
ւորուեց կաթուղիկոսարանին մէջ. և
տասն եպիսկոպոսք իր հետ. երբ առա-
ւօտեան ժամը երեքին եկեղեցական ու-
խտը խաչ ու խաչվառիւ կաթուղիկոսա-
րանի դուռը եկաւ, կաթուղիկոսը հան-
դիսիւ վար իջաւ վեհարանէն խորհուրդ-
նոցին երգով, տասն եպիսկոպոսք զգես-
տաւորած երկու կարգ կեցեր էին յաջ և
յահեակ կաթուղիկոսին. և բարձրաս-
տիճան սարկաւագները յառաջեւ. առաջին
երկու եպիսկոպոսաց ձեռքին էին սուրբ
Գեղարդը և խաչն կենաց փայտի. եր-
րորդ երկուքը ունէին ՚ի ձեռին մէկը
միւռոն և միւսը միւռոնի հետ խառնելիք
ծաղկանց նիւթը արծաթի ոսկեզօծ ա-
նօթներով. երրորդ և չորրորդ կարգը
կ՚կրէին ի սոյն հանդիսին և յօրհնու-
թիւն սրբոյ միւռոնին՝ սրբոց մասունքն Ս.
սրբոյ լուսաւորչին, սրբոյն Յակոբայ
Մծբնայ Հայրապետին, սրբոյն Խաչ-
դէոսի առաքելոյն և սուրբ Սրբատակեա
հայրապետին. հինգերորդ երկուքը մէկը
Ս. Նատրան և միւսը Բալասան անուշա-
հոտ իւղը.

Զինուորական նուագարանները թէ
և կ՚երգէին ՚ի հեռուստ ժողովուրդը
զբօսացնելու և հոգևորական հանդիսի
յառաջ ճանապարհ բանալու, բայց բազ-
մութիւնը այնքան խիտ էր երկու կողմից
որ զինուորք չէին կարող նոցա մուտը
յետս ամփոփել, որք ջերմեռանդու-
թեամբ սրտի կ՚փութային ՚ի համբոյր
սրբոց մասանց. հազիւ տաճարին մէջ
եւ բազմութիւնը ճեղքելով այս դժ-
ւարութեամբ և այսպիսի շքեղու-
թեամբ հանդիսի Վեհափառ Հայրապե-
տը եկաւ ՚ի սեղան և պատարագն սկսաւ

Ո՞չ երբէք արդարև քաղաքական հան-
դէսները կ՚նմանին եկեղեցական հոգևոր
հանդիսից փառաւորութեանը և մեծ վա-
յելչութեանը. որոնք մարմնաւոր զուար-
ճութիւններով մարդկան բազմութիւնը
կ՚զբօսացնեն և նախնի մեծագործութեց
յիշատակներով նոցա ուշը կ՚դարձնեն
աշխարհքի փառաց ունայնութեան վրայ
մինչդեռ Եկեղեցական հանդէսները ի-

(1) Ըստորում անհնարին էր այնքան բազմութեանը սուրբ տաճարին մէջ ամփոփուիլ, որոց մեծ մասը դուրս պիտի մնար, վասնորոյ Վեհափառ Հայրապետը հանդէսը վեհարանէն սկսեցուց որ գոնէ եւ դուրս մնացողք մխիթարուին:

բենց այսպէս գերօրինակ շքովն ու փա_ ռաւորութեամբ ոչ միայն հաւատացե_ լոց բազմութեան սրտի փափագը կ՚ձգտեն դէպ յուրախութիւն ըստ մարմնոյ և ՚ի լուր հոգևորական երգոց քաղցրութեան այլև նոցա հոգեկան սէրը և քրիստոնէա_ կան հաւատոյ զօրութիւնը կ՚բորբոքեն հոգեպէս յԱստուածպաշտութիւն , և ի վայելս շնորհացն Աստուծոյ և ողորմու_ թեան . և նախնական աստուածպաշտու_ թեանց և կարգաց սրբութեան փեմունքը կ՚ներկայացնեն բազմութեան աչքին , ո_ րով նոցա քրիստոնէական ջերմեռանդու_ թիւնը և հաւատքը կենդանի կ՚մնայ առ Աստուած և առ սուրբ Եկեղեցին .

Այս էր այն ժողովրդոց այսչափ բազ_ մութեան հաւատոյ և Աստուածպաշտու_ թեան շարժառիթը . որոնք հեռաւոր տե_ ղերէ դիմեցին յԱթոռ ՚ի տես հանդի_ սի օրհնութեան սրբալոյս միւռոնի և յոր ժամանորութիւն շնորհաց Հոգւոյն սր_ բոյ ՚ի ձեռն աղօթից և խնդրուածոց առ Աստուած վասն շինութեան աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ . Ճա_ նապարհի նեղութիւնը , երկարութիւնը ոչ ինչ էր նոցա հոգեկան ջերմեռանդու_ թեան յառաջը . իսկ Աթոռոյս մէջ հա_ քածներով մնալը՝ աւելի ուրախութիւն ,

Պատարագի սկզբէն մինչև վերջը եկե_ ղեցին ծայրէ ծայր լիքն էր ժողովրդովք . երբ որ աղջանէն յառաջ սրբալոյս միւ_ ռոնի օրհնութիւնը սկսաւ և իւղոյ կա_ թսայն բացուեցաւ . հանդիսատես բազ_ մութեան հոգւոց աչքը ևս կարծես թէ նոր բացուեցաւ . ծխու աւելացնելն յա_ ռաջ ու յետ կ՚շարժէր բազմութիւնը Եկեղեցւոյ մէջ և նոցա ջերմեռանդու_ թիւնը անտեսողի աչքէն արտասուք կ՚թա_ փէր .

Աղօթից կարգը աւարտելէն ետքը՝ վե_ հափառ Կաթողիկոսը տասն զգեստա_ ւորեալ Եպիսկոպոսաց հետ գարձու ա ժողովուրդն շրջապատելով զեւթոյն , իւրաքանչիւր մատանիներով կարգա և առանձին առանձին օրհնեց զուրը իւ_ ղոյն , խառնելով նորա հետ՝ հին միւռոնի ծաղկանց նիւթերն և բալսամն . և խա_ չիւ և աւետարանաւ կնքելով զայն ան_ ուամբ Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ , օրհնեց զբազմութիւնը . և գեղեցիկ առ նաքանութեամբ բացատրեց սրբալոյս միւ ռոնի շնորհաբաշխութիւնները , որ ՚ի ձե_ ռըն խորհրդոց Եկեղեցւոյ կ՚մատակա_ րարուի հաւատացելոց և նովաւ կ՚որդե_ գրուին Հօր Աստուծոյ ամէն քրիստո_ նեայ հաւատացեալք .

Այս աղջոյն տալով ուխտի եկեղեցւոյն և ամենայն բազմութեանն , պատարագը սրբագործեց , ու նոյնին հանդիսին հո_ գևորական ուխտ , որով եկել էր յԵկե_ ղեցին , զնոյն վերստին ՚ի Կաթողիկոսա_ րանն , ժողովրդոց արտաքին բազմութիւ_ նը հայելու ձեռքերով զօրաց կանոնաւոր հսկողութեամբն Ամենապատիւ երկու կող_ մից և ա ;

Տաս հանդիսաւոր հրաւիրութիւն ե_ ղաւ նոյն գիշերը շինուորական նուագա_ րաններով և զբօսանս ժողովրդոց , և յու_

րախութիւն բոլոր ուխտաւորաց, բայց ճշմարիտ քրիստոնէի ուրախութիւնը և հոգեկան մխիթարութիւնն էր միմիայն սրբալոյս միւռոնի օրհնութիւնը. որ կը շարժէր բազմութեան հեռաւորաց և մերձաւորաց սրտի ջերմեռանդութիւնը, որոնք երեք օր տիւ և գիշեր անընդհատ կ'դիմէին 'ի համբոյր կաթսային արժանանալով հոգեկան շնորհաց օրհնութեան և մասանցն սրբոյ, որք բազմացրած էին սեղանի յառաջ.

---

Ս. Աթոռոյս ժառանգաւորաց դպրոցի հարցաքննութեան օրը աշակերտաց ցոյց տուած յառաջադիմութեան ցուցակը հանդերձ ա՛ռ մեզ գրուած նամակով կ'հրատարակեմք 'ի տեղեկութիւն ազգայնոց. և 'ի քաջալերութիւն միւս ազգային ուսումնարանաց կ'դնեմք Երեւանայ հայոց Օրիորդաց Աշտարակ գիւղէ և Գօրի քաղաքի հայոց դպրոցաց հարցաքննութեանց օրը կարդացած ճառերը, որոնք յատուկ նամակներով ուղարկած են մեզ հրատարակելու, որոց մէջ մասնաւոր գոհութեան արժանի է Աշտարակայ Ս. Ծիրանաւորի եկեղեցւոյ Տէր ժամապետ տէր Սարգիս քահանայն. որ իրենց դպրոցի վարժապետը յատուկ իւր տանը կ'խնամէ և աշակերտաց կրթութեանը և եկեղեցական երգեցողութեանը համար հոգ կ'տանի, ինչպէս որ ականատես եղանք

Աւսումնասէր անձինք զանազան քաղաքներէ ևս յօդուածներ ուղարկած են մեզ Արարատոյ մէջ տպուելու. որոնք հետզհետէ կ'հրատարակեմք ըստ յարմարութեան նիւթոցն.

---

Գերապատիւ Սրբազան Նուբար.

Եթէ կայ մեր ազգի արդի վիճակի մէջ մխիթարական և ազգօգուտ ձեռնարկութիւն մի՝ այն բարեկարգ դպրոցաց հիմնարկութիւնն է. և եթէ կայ ուրախարար հանդէս մի՝ այն հարցաքննութեան հանդէսն է, եթէ աշակերտք տարուան շրջանին մէջ ժրաջան աշխատութեամբ անպտուղ չեն թողած իրենց մեծաւորաց և վարժապետաց ճիգը և վաստակը.

Չէ՛ և բոլոր միաբանութեանս շատ լաւ յայտնի է որ մեր Վեհափառ Կաթուղիկոսի հոգևոր գլուխ Հայաստանեայց եկեղեցւոյ ընտրուելէն յետոյ ըստ միահամուռ հաւանութեան բովանդակ Ազգիս՝ հոգ տարաւ Էջմիածնայ ժառանգաւորաց դպրոցը բարեկարգելու և ուսման առարկաներու շրջանը ընդարձակելու որով ոչ միայն նորա մէջ Ռուսերէն և Գաղղիերէն լեզուները մուտ գտան, այլ և քանի մի չափահաս սարկաւագներ ևս անխոնջ ջանասիրութեամբ պարապել սկսան նոյն լեզուներով.

Ահաւասիկ Նորին Վեհափառութեան բարձր հրամանաւն էր նոյն ուսումնարանի աշակերտաց հարցաքննութիւնը, որու համառօտ նկարագրութիւնը այս գրոյս մէջ կը բովանդակեմ: Հարցաքննութիւնը